


ՏԻՐ ԵՆ ՏՆՕՐԻՆ  
 Ե. ՓՈՐՈՍՅԱՆ  
 Եամակ կամ որ եւ է  
 գրութիւն պէտք է ուղղել առ  
 Տեօրին. ԱՐՇԱՆՈՅՍ րազրի  
 ԳԱՀԻԷ (եգիպտոս)



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ԵԳԻՊՏՈՍԻ ԶԱՄՍՐ  
 Տարեկան ուր դասին 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԻՆ  
 Տարեկան Տրակ 20  
 Վեցամսեայ » 12

F. TOROSSIAN  
 Direc.-propr. du journal arménien  
 ARCHALOUYOE  
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԽԻԿ  
 Եւ թղթատարի ծախքը  
 Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղում  
 գրութիւն և չ'են տրուիր

Ա.Զ.Գ.Ա.Ր.ՈՒԹԻՒՆՔ  
 Կանխիկ վճարելի են

ՊԱՐԶԱՄԻՏՆԵՐՈՒՆ

Կիտական անունով մը մկրտուած այն  
 ամեն ֆիզիքական հիւանդութիւնները ,  
 որոց դէմ էսքիւլպի աշակերտները իրենց  
 դոյութեան սկզբնաւորութենէն ց'այսօր —  
 յաջող թէ անյաջող — տեսպէս պայքար մը  
 մղելու պարտաւորուած են՝ բաւական չ'էին  
 կարծես , վերջին մեր եգիպտացեան ազ-  
 գայիներէն ոմանք , նոր հիւանդութիւն մը  
 ստեղծելու փորձերը ցոյց կուտան . հիւան-  
 դութիւն մը մտքի , որուն մենք դեռ որոշ  
 անուն մը չ'պիտի կարենանք տալ . իսկ ա-  
 նոր շիճուկը գտնելու համար , բնական է  
 թէ , ո՛չ Հիպոկրատ , ո՛չ Բասիլէոս , ո՛չ Բոս-  
 իրենց մտքը պիտի յոգնեցնէին , և ո՛չ ալ  
 բժշկական աստեղծութիւնը մասնաւոր տեղ  
 մը պիտի շնորհէր իր էջերուն մէջ :

Կիտական անունով թէ ապշութիւն  
 անուանենք արդեօք այս նոր հիւանդու-  
 թիւնը , որուն հեղինակ դասակարգը , գրծ-  
 բաղդաբար դատելու կարողութենէն զուրկ ,  
 հոյին առջեւ ձգուած թեթեւ փետուրի մը  
 կամ ուղեկորոյ նաւու մը պէս կ'երթայ  
 հոն ուր իրեն համար իբր նպատակակէտ  
 գծուած չ'էր :

Երեկայ մը , եթէ կ'ուզէք ընկերով մը  
 միասին՝ պոստի ելէք այն սրճարան-գի-  
 նետունները , ուր ի մէջ այլոց , հայեր ալ  
 կը յաճախեն . հոն պիտի հանդիպէք հայա-  
 խառն խմբակներու , որոնք օղիի շիջերուն  
 բողբոջի շրջանակուած , ըստ երեւոյթին  
 տաք վիճաբանութեան մը մէջ են և եր-  
 բեմն թիթեղեայ փոքրիկ դեղնագոյն սե-  
 ղաններն ալ բողբոջի աղաղակներ կ'արձա-  
 կեն վիճաբանողներու կռուիի հարուածնե-  
 րուն տակ :

Մեր միամիտները թերեւ կը կարծեն  
 թէ՛ իրենց մտադրած մէկ փոռաւոր դիւ-  
 քը ձեռք անցուցած չ'լինելուն համար , հե-  
 սիէն հեռի Սուլթանին դէմ յիշուցներ արձա-  
 կող և գրաւոր բողբոջ իրենց խօսակից  
 ժեօն-թիւրք կողմածները , արդարեւ հայկա-  
 կան հարցին ալ նպաստաւոր պիտի խօսին  
 ու մտածեն , ու հետզհետէ անոնց հետ  
 սերտ բարեկամութիւն մը հաստատելու  
 տրամադիր ցոյց կուտան ինքզինքնին :

Թողունք այն՝ որ այդպիսեաց խօսած  
 կամ պաշտպանածը ո՛ր է արդիւնքէ զուրկ  
 պիտի լինի , կը տեսնուի սակայն որ ժեօ-  
 ներու հայ համախոհները մասնաւոր հպար-  
 թիւն մ'ալ կ'զգան և թերեւ՝ թեթեամտու-  
 թիւնը կ'ունենան մտածելու թէ՛ իրենց ազ-

գին օգուած շոշափող խնդրներով կ'անցը-  
 նեն իրենց ժամանակը , ու ալ դիւրին է եզ-  
 րակացնել թէ այդ դասակարգը ո՛ր աստի-  
 ճան պարզամտութեան հիւանդութեամբ մը  
 վարակուած կ'ըլլայ :

Ալ այն տոնն հարկ կ'ըլլայ այդպիսի-  
 ներու վրայ ալ կարեկցութեան ակնարկներ  
 ուղղել , և նոյն իսկ միտք յոգնեցնել դար-  
 մանելու համար այն հիւանդութիւնը , որ  
 այդ ողորմելիներուն գլխին մէջ բոյն կը  
 դնէ և անուրանալի է որ տակաւ ինչ յետոյ  
 իրեն միքորպները պիտի տարածէ այս  
 ու այն կողմ :

Այդպիսիներու վտանգաւոր հիւան-  
 դութեան դարման մը գտնելու համար ու-  
 բեմն , փոխանակ ուղղակի մեր կողմէ դե-  
 դահատ մը հրամայելու որ կրնայ ըլլալ թէ  
 խորշին զայն կ'անելու , յարմար կը դա-  
 տնէք յանձնարարել իրենց Պ . Ոկիւրթ Պէ-  
 նար անունով ֆրանսացիին կողմէ « Լ'Արմե-  
 նի » ին ուղղուած նամակը , որ իր առողջ  
 տեսութիւններով ու դատողութեամբ , կըր-  
 նայ շատ փրկարար գեղազիր մը լինիլ մեր  
 պարզամիտներուն համար :

Ահա.ամիկ նամակը :  
 ՍԻՐԵԼԻ ՊԱՐՈՆ .

« Լ'Արմենի » ի վերջին թիւին մէջ Ձեր  
 Ահմէտ Րիզային նուիրած յօդուածը կար-  
 դացի այնքան հաճոյքով որքան հետաքրք-  
 րութեամբ :

Մէկէ աւելի անգամներ « Մէշլիքի-  
 թի » մէջ կրցայ հաստատել թէ Երիտա-  
 սարգ Թուրքիոյ կուսակցութեան պետը  
 նոյնքան անհրաժեշտ ու նոյնքան նենգա-  
 միտ է որքան իր օսմանդի ու ազգութաց  
 յոյն պաշտօնակիցները , Նիքօլախիսներ  
 և ուրիշներ :

Եթէ կրիտասարգ թիւերը իշխա-  
 նութեան գլուխն անցնին , բարեկորողու-  
 թիւներ կ'ամ ինքնավարութիւն իրաւամբ  
 պահանջելու ձգտող հայերը մեղապարտ Ապ-  
 տիւլ Համիտի վարչութեան ներքեւ իրենց  
 վերապահուած ընդունելութենէն տարբեր  
 բանի մը չ'պիտի հանդիպէին : Քանի կը  
 կարգամ Ահմէտ Րիզայի յօդուածները ,  
 այնքան աւելի կը նշմարեմ թէ պէտք է  
 անոր դէմ պայքարել որչափ ելլալով  
 կարմիր գազանը շրջապատող թուրք պաշ-  
 տօնական կուսակցութեան դէմ :

Ահմէտ Րիզա կը մերժէ ճանչնալ հայ  
 ազգին իրաւունքները . կ'ուզէ որ Հայաս-  
 տանը մշտնջենապէս թուրքերու լուծին  
 ներքեւ մնայ և ատեն ատեն Գիւրտերէն  
 արիւնտուր . անոր առաջարկած գունատ բազ-  
 րենորդումները Ձեր կրկիրը կ'ախֆանե-  
 րու կայսրութեան աւելի ուժգնօրէն պիտի  
 հպատակեցնէին և պիտի սրբախնդիր որ օր  
 մը իր ազգութիւնը չի վերտանայ . բան

մը որ տեղի պիտի ունենայ իրերու ընա-  
 կան բերմամբ , հակառակ « Մոսկօֆեան հը-  
 բէշին » վատատող ցանկութեանց որ իր  
 կարգին պիտի հալի Նաբուգոնոսորի կա-  
 լէ նտքերուն տոջուի արձանին պէս :

Թողր կուսակցութեանց ու ամեն դա-  
 ւանանքի հայերը միակ նպատակ մը պար-  
 աին ունենալ Հայրենիքի Ազատագրութեանը  
 զոր շատ մը յարափոխիս անցքեր ստիպե-  
 ցին երկար քառնելի լուծ մը տանելու քը-  
 ռիստոնեայ պետութեանց յանցապարտ տը-  
 կարութեամբը — պիտի ըսէի մեղսակցու-  
 թեամբը — երկարուած :

Բայց Հայրենիքի գաղափարը մարմ-  
 նացած է այն երկրի մէջ ուր ժամանակին  
 սիրապետեցին Տիգրաններ , Արշակունիք ,  
 Բագրատունիք , Չանքերովը ազգային կը-  
 դերին , լրագիրներու և յեղափոխական  
 գոմիթէիներու որոնք կարմիր սուլթանին  
 այնքան սոսկում կ'ազդեն ու արտասան-  
 մանի մէջ ձեր թերթին պէս քաջասիրտ  
 հրատարակութիւններով և ձեզ պէս ետան-  
 դոտ հայրենասէրներով զոր արդէն նշանա-  
 ւոր ծառայութիւններ մատուցած էք ձեր  
 ազնիւ շահագրգիռ ու տարաբաղ ազգին :

Ո՛չ , երիտասարդ թուրքերը ձեզ չեն ու-  
 ժանդակիր . հայերուն հետ շահակցութիւն  
 մը չ'ունին . անոնց պետը Ահմէտ Րիզա ,  
 մէկէ աւելի անգամներ ապացոյցը տուաւ :

ՕԿԻՒՍ ՊԵՆԱՐ

ՅԱՆՎԵՆՏՈՒԹԻՒՆԸ  
 ԵՒ  
 ԱՆՈՐ ՎԵՍՆԵՐԸ ՄԵՐ ՄԷՋ

Կարողութեան մը իսկական արժանեաց  
 բարձրութիւնը գնահատողներ շատ քիչ կը գտ-  
 նուին մեր մէջ , ասիկա բացարձակ ճշմարտու-  
 թիւն մ'է գծազգաբար՝ որ անհատի մը՝ հան-  
 զէպ իւր ազգը՝ իւր համայնքը տածած ամեն բա-  
 րի ձգտումները կը կատարեն իւր նախաքայլե-  
 թու վրայ , ձգտումներ որոնք կը ծնին անկեղծ  
 ու անշահախոգիր սրտերու մէջ , սնուցանելով  
 հոգին սիրով մը , վսեմ ու ազնիւ :

Թէ ի՞նչ գեր իաղացած է մինչև ցարդ  
 նախանձու և ստեղծութեան ողին մեր ժառան-  
 դական և կամ տոնմային գործոց շարքերուն  
 մէջ . . . անաւասիկ հարցում մը՝ որուն ան-  
 կարելի պիտի ըլլայ պատասխանել տաանց ա .  
 մօթի պզտիկ արտայայտութիւն մը մեր դէմ-  
 քին վրայ՝ և կամ խղճի ամենափոքր խայտ մը  
 զգալու մեր սրտին խորը . նախանձու հիմը դը-  
 նողը յաւակնտութիւնն է , այս մոլութիւնը  
 այն աստիճան յառաջացած է մեր մէջ որու ա-  
 ռաջը անուրը անկարելի կը նկատուի բացար-  
 ձակապէս . անձ մը՝ ըլլա՛յ այն ըլլա՛յ կին՝ կըր  
 վարակուած է այդ սխտէն , չ'է կարելի այլևս  
 ազատիլ անոր յաջորդը եղող նախանձու աղբ-  
 ներէն՝ որք կը բաղխին միշտ իւր սրտին , փըշ-  
 րելով հատցնելով ամեն մէկ անգամուն կտոր  
 մը իւր կեանքէն , իւր հոգիէն :

Յաւակնոտ մը կը կարծէ միշտ ունենալ այն ամեն առաւելութիւնները . . . որոնց անունները նոյն իսկ գոյութիւն չ'ունին թերեւս իւր ուղեղին մէջ . . .

Անհատի մը խօսելու իրաւունքը անբռնաբարելի է՝ երբ անոր սահմանը դժուար է ու զերծ կը գտնուի նախանձու ու ատելութեան շրջանակէն . . .

Անհատական իրաւունքի վրայ խօսած ատեննիս կ'արժէ նաեւ քննել թէ՛ անձ մը մինչև ո՞ր աստիճան պէտք է որ յառաջանայ իւր այդ իրաւանց պաշտպանման գործին մէջ . . .

ԱՐՏԱՃԵՍ ՄՍՐԻԵԱՆ

Գահիրէ 10 Յունիս 1901

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ANCH' IO SON UOMO (ԵՍ ԱՆ ՄԱՐԳ ԵՄ) (5)

Գ .

Թերեւս այսպէս խորհելով կուրար Մարի-րիէթթա իր սիրեցեալ զաւակին պարսպ ձգած օրբանին վրայ . . .

Մարիէթթա՛ մայրը՝ կուրար եւ կը համբուրէր օրբանին մէջ մի կողմը . . .

Թարուած հողին տակ , այն անձրեւին տակ , թըջուած , ցուրտ հողին տակ . . .

Այս մտածումով Մարիէթթա այնքան լեցաւ , որ չ'կրնարով տարբեր ինքզինքը զպակի փղձկեցաւ . . .

Ընդհանրէ վաղեց իր կ'նոջ քով , եւ ձիւրօւմով ընդոտ արթնցաւ . . .

Մերուներն մէկ օրուան մէջ բուրբովին

ԱՌ ՄԳԱԿԻՐ ՏՈՒՆՆ ԿԱՄԱՐԱԿԱՆ

Ի սպառի մահ առաքինապարզ Մաննիկ Տիկնոջ որպէսգորով մօրն Կամարական բարեպաշտ գերդաստանին

—\*—

Տուն Կամարական սուր պատեց ձեզնով , Լցուած էր այն՝ անշարի վշտով Զի հիշեց անունան դառնաշունչ քաղիկ Զեր մայրն առաւ , վերածեց յերկին . . .

Ո՞ր հարուստ , եւ կամ ո՞ր խնամուտ մարդ Կրցեր է անհուն զիւր մեալ հակադարս . . .

ՍԻՄՈՆ Զ. Մ. ՅԵՆԷԿԵԱՆ

ՄԱՆՈՒՅ . — Ազնիւ անդամք Կամարական գերդաստանին . . .

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

ՃԻՒԱՂ ՄԱՅՐ ՄԸ ԵՒ ՀՐԷՇ ԵՂԱՅՐ ՄԸ

Բուռութիւն մէջ ողբերական գիւտ մը կատարուած է . . .

Միւսօքի մօտ ահագին հարստութիւն ունեցող կին մը , Տ. Մօնիկէն իր աղջիկը 20 տարիէ ի վեր բանալարկած է փոքրիկ սենեակի մը մէջ . . .

Փոխուած էր . կարծես թէ տասը տարի աւելի ապրած էր . . .

Դէմքը թախծալից , աչքերը բարկացալտ , ելաւ կանգնեցաւ՝ կորաքամակ : Զետքովը սեղանին զարկաւ . . .

—Ա՛հ , այն մարդը , այն կնոջը . . . մեր դժբաղդութեան պատճառն այն մարդն է :

—Ո՞ր մարդը , հայր , հարցուց ձիւզերբէ :

—Այն սասկելիքը Արդարը :

Այր եւ կին իրարու նայեցան անձկութեամբ : Իննզեցած էր ձերուներն . . .

—Այ՛ն , ըսաւ ձիւրօւմով . դուք չ'էք հասկընար , բայց ես կը հասկնամ : Եթէ ես այն մարդուն չ'արիք չ'մաղթէի , այն ձիւնը չ'պիտի դար մեր գլխուն . . .

—Ինչ ըրիր այն մարդուն , հայր , հարցուց Մարիէթթա իր արտասուած մէջէն :

—Ոչինչ , դժբաղդարար : Ժամանակին նա զիս ապտակեց , եւ որովհետեւ չ'էի կրնար վերջ տալ իւր ձեռնին . . .

—Պէտք էր ներել , հայր . . .

—Ահ . . . անհեծեցի դայն . մաղթեցի անոր կախուելու տեսնել Հայոց ներկայ ապստամբութեան մէջ , նոյն իսկ եթէ զաւակս վրայ տալ հարկ ըլլար : Աւա՛ղ , մաղթանքիս մէկ մասը . . .

Ինձ աննպաստ մասը — միայն կատարուեցաւ . փոքրիկը մեռաւ , բայց մարդը կ'ապրէ՝ միշտ պատուեալ , միշտ խրոխտ . . .

—Բարեք գտնելու միակ միջոցը , ուրիշին համար բարեք խնդրել է , հայր , ըսաւ Մարիէթթա տխուր շեշտով մը՝ թերեւս Աստուած մեզի դաս մը տուաւ , որմէ պէտք է օգտուել , հայր , . . .

այդ թշուառ էակը անընդհատ 20 տարիներէ ի վեր ինչ օրեր անցուցած է այդ փոքրիկ սենեակին մէջ , որուն վրայ կը կայանայ այժմ՝ բարձր փրանսայի բնակաց ուշադրութիւր :

Մարիէն , ուրիշ այս մանրամասնութիւնները կը քաղենք , իր մասնաւոր լըրաբերները զրկած է հոն որ հետեւեալ տեղեկութիւնները ստացած են :

20 տարի այդ ամբարիակորէն գոցուած սենեակին մէջ կերած , խմած , նստած , պառկած , պէտքերը կատարած է այդ թըջուառ էակը , եւ օր մը օրանց այդ ահաւելի բանտին սեմէն դուրս դրած չ'է իր սաքը . 18 տարեկան գեղանի , կրակոտ աղջիկ մըն էր նա ժամանակին , որ իր վրայ կը հրաւիրէր շրջակայի պարոններու ուշադրութիւնը . . .

Մինչև որ պառու աղախինը ողջ էր , աշխարհք բան չ'էր գիտնիր այդ ողբալի բանտարկութենէն , բայց այդ մեղսակիցին սատկելէն յետոյ , Տիկնոջ Մօնիկէն կ'ստիպուի երկու երիտասարդ աղախիններ բերել . . .

Անցեալ հինգշաբթի հասարակագետութեան Բուռիէի դատախազ Պ. Ֆրէքո , որուն ահանջը հասած էին տարտամ եւ կասկածելի շուկներ , իր մասնաւոր Գօմիսէր Պ. Պուլթօնը զրկեց մանրամասն եւ օրէնքի համեմատ քննութիւն մը կատարելու համար . . .

Երբ Պ. Պուլթօն Տիկնոջ Մօնիկէի դուռը զարկաւ , իրեն իմաց տուին որ անհանգիստ ըլլալուն չ'էին կրնար ընդունիլ զինքը . . .

Ներելով ամեն անոնց , որոնք մեզ կ'ատեն . այս ըլլալով է ճշմարիտ քրիստոնէի վրէժխնդրութիւնը :

—Դիցուք թէ անանկ ըլլայ , Մարիէթթա , բազմ թիւէ ես պարտագանց կոչայ , Աստուած՝ իբրեւ արդար՝ զիս պատժելու էր , եւ ո՛չ թէ անմեղ մը . . .

—Եւ ո՞վ կրնայ ըսել թէ Աստուած արդարութեամբ չ'գործեց : Ինչ է պատժել եթէ ոչ տրտմութեան , զրկողութեան , ինքն իր վրայ ամփոփման մատնել յանցաւորը :

—Բայց ինչո՞ւ զիս չ'մեղցուցախոնարակ անմեղի մը :

—Հայր , եթէ դուն մեռնէիր , քու մեղքերուդ մէջ պիտի մեռնէիր , եւ այնպիսի մահուան հետեւանքը ուրիշ բան չ'է , բայց՝ միայն անգառնալի կորուստ , մինչդեռ անմեղի մը մահը երկու բարեք կ'արտագրէ , տաղինն է՝ այն անմեղին աղախիլը , եւ երկրորդն է՝ յանցաւորին ուշաբերելու ապաշխուհիլը : Ա՛հ , հայր , Աստուած միշտ արդար է , եւ միշտ մեր օգտին համար կը գործէ :

Մերուներն կը խոկար :

—Թերեւս իրաւունք ունիս , Մարիէթթա , ըսաւ , պահ մը կտրէ . բայց եւ այնպէս եթէ այս րոպէիս այն մարդը ձեռքս աչցնէր , չ'եմ խոստանար որ ոճրագործ չ'պիտի ըլլամ . վասնզի սիրտ , միտք , հոգի . . .

Դրան շտապաւ եւ ուժգնակի բաղտուէն ընդմիջուեցաւ մարդը :

Ա . ՊԱԼԵԱՆ (Շարունակելի)

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Գոմիսէրը առանց վայրկեան մը կորսնցնելու, յանուն օրինաց բանս սենեակին դուռը կտորել տուաւ և հետեւեալ տնուելի տեսարանը պարզուեցաւ արդարութեան ներկայացուցիչներուն աչքերուն առաջ :

4 ի վրայ 3 մեթր տարածութեամբ, միակ պատուհանը ամրափակօրէն խցուած, փեղկերը կղզուած, և ապակիներուն առջև հաստ վարագոյրներ քաշուած, մուս մուտ սենեակի մը մէջ աննկարագրելի տղտոտութեանց, գարշելի, զազրալի յօթերու, անանուանելի կղկղանքներու, ազտեղութեանց, ճենճի, գարշահոտ շորի, քուլերայտ սաւելիքի մնացորդներու, ոտքերի պատեաններով լեցուն այդ տարածութեան վրայ աղտի հաստ խառնով ձածկուած, պատուտած, բղիկ բղիկ եղած առանց սաւանի խշտեակի մը վրայ կին մը երկնցած էր, աւելի ճիշտը կնոջ մը կմախքը կը գտնուէր Պլանշ Մօնիէն էր :

Թշուառ արարածը մերկ էր, աչքերը դաժան, մարմինը բորոտած և աղտով ծեփուած, մազերը մաշառի պէս, որոնց մէջ ոչինչ, միլիօնաւոր ոչինչեր ազատ համարձակ ճիւղեր կը խաղային և կուտէին կը կոծէին թշուառ կնոջ մարմինը : Պլանշ Մօնիէն այնչափ նիհար էր, որ ոսկորով կաշի միայն մնացած էր :

Գոմիսէրները յուզուած և աչքերը արտասուքով լեցուած, անմիջապէս դէպի պատուհանը խոյսցան, երկվայրկեանի մը մէջ խորտակեցին զայն, մաքուր օդ ներմուծելու համար, աղջիկը սարսափահար անկողին վրայ նետուեցաւ և բուրձերուն տակ ինքզինքը ծածկել ջանաց :

Պ. Պուշթօն չըջակայքի կինները կանչել տուաւ աղջիկը ապահովեցնելու համար և անմիջապէս յետոյ Օրէշ Տիէօ փոխադրել տրւեալ ուր մազերը ամիլեցին, ոչինչներէն ազատելու համար, լուացին և մաքրեցին և քոյրերուն խնամոցը յանձնեցին զայն :

Ամբողջ Բուսթիէի ժողովուրդը հրէշին դրանք առջև խռնուած ջախջախել կուզէր ճիւղ մայրը, բայց ոտականները ետեւի դռնէ մը զայն փախցուցած և բանտ առաջնորդած էին :

Աղջիկը տակաւ առ տակաւ ինքզինքին գալ սկսած է : Հիմա բաւական լաւ արտօթակով կուտէ և Տօքթօն Շուսար կը յուսայ զայն աղէկցնել :

Պլանշի լուսանկարը, նաև բանտ սենեակին պատկերը հանած են : Պատուհանը 20 տարի երբէք բացուած չէր : պատին վրայ յուսահատութեան խղճալի, աղբխարչ բառեր գրուած են խեղճ աղջկան կողմէն :

Ամբողջ Ֆրանսա կատաղած է : Թերթերը նորանոր մանրամասնութիւններով կը լեցնեն իրենց սիւնակները : Իսկ կղերական թերթերը կը պաշտպանեն բուն կերպով ճիւղ մայրը ու հրէշ եղբայրը, որովհետև տե շեքմեանդ եկեղեցասէրներ : " Են և : ու կրտսի թէ՛ մայրը իր աղջիկը ժառանգութիւնէ զրկելու և ամբողջ հարստութիւնը եկեղեցիին նվիրելու համար է որ այդ հրէշային գործը կատարած է :

—Անցեալ Շաբաթ օր Վիէօ-Գէռի Յունա-քաթօլիկ գերեզմանատան մէջ տեղի ունեցաւ Էյ-Էհրաւ և Բիրաւիս լրագիրներու Տնօրէն Թագլա փաշայի յուղարկաւորութիւնը : Հանգուցեալը ծննդեամբ Սիւրիացի էր 1852 ին ծնած :

Տեղային լրագրութեան ամենաբարձր ներկայացուցիչներէն մէկն է հանգիսացած հիմնած է Սասա-Էյ-Ահրաւ Հագիգար-Էյ-Ախպար և Էյ-Վազրր լրագիրները, որոնք կարճ ժամանակ տեւելէ վերջ խափանուած են իրենց պաշտօնակամ չափազանց ազատական յօդուածներուն պատճառաւ : Թագլա փաշայի մահուցէ իր հիմնած ու 25 տարիներէ ի վեր շարունակած էյ-Էհրաւը և երկու տարիներէ ի վեր հրատարակուող Բիրաւիս օրագիրները չեն խափանուիր, խմբագրական մարմին մը իր ժառանգորդին հետ պիտի շարունակէ իր սկսած գործը : Մեր ժրջանի պաշտօնակցին մահը կորուստ մ'է ամբողջ տեղային մամուլի ներկայացուցչայ համար :

—Երկուշաբթիէն սկսեալ Հայոց բարեգործական ընկերութեան Սրճարանը փակուեցաւ, և գոյքերը առժամապէս մթերանոց մը փոխադրուեցան : մեզ յայտնի չէ թէ այլևս պիտի շարունակուի թէ ոչ : ուրիշ առթիւ պիտի զբաղինք արդէն այս խնդրով :

—Եթէ մէկ կողմանէ սմանց տխրութիւն կը պատճառէ Բարեգործական Ընկ. Սրճարանի փակումը, միւս կողմանէ ուրախութիւն է ծանուցանել թէ Բարեգործականի ներքին Տնօրէն Տիար Լ. Միրիճանեան յաջողած է գնել Օթէլ Խտիվեալի դիմաց նորաշէն Էտէն Փալատ Օթէլի ներքև գտնուող Գաֆէ Էմբէրիալը, որ կը կարծենք թէ բարեգործականի պակասը պիտի կրնայ լրացնել մերայնոց յարմար ժամադրաւայր մը գառնալով :

—Անցեալ օրը Գալստեան վարժարանի քննութեանց պահուն ծանր միջադէպ մը տեղի ունեցած է աղջկան մը հօր և հոգաբարձուի մը միջև : Միջադէպի պատճառն է եղած հոգաբարձուին քննութեան առթիւ 14-16 տարեկան աղջկան մը ուղղած հետեւեալ հարցումը :

« Գծեցէ՛ք անբարոյականութեան սահմանները : » Աղջիկը առանց պատասխանելու եղած հարցումն, խնդիրը իր հօրը իմացուցած է, և մնացեալը դիտենք :

Այս հետաքրքրաշարժ խնդրոյ մասին հետզհետէ մեզ հասած և հասնելիք տեղեկութիւնները ստուգելով պիտի տեղեկագրենք ի գիտութիւն մեր ընթերցողայ :

Սակայն անցողակի ըսենք թէ՛ մեր հոգաբարձուին հարցումը շատերուն պիտի յիշեցնէ անմահ Պարոնեանի Պտղոնեան մէջ եղած մէկ հատուածը, որով նա գծած է Ղալթիոյ սահմանները հետեւեալ կերպով :

« Ղալթիոյ սահմաններն են : արեւելքէն՝ դիմեմուտութիւն, արեւմուտքէն՝ անբարոյականութիւն, հիւսիսէն՝ գողութիւն, հարաւէն՝ . . . գութիւն : »

Հիմա տեսնենք թէ ո՞վ պիտի գծէ հոգաբարձուին վերոյիշեալ հարցման սահմանները և ինչպէս, քանի որ Պարոնեանը այժմ ո՛չ ևս է :

—Մալիս սմանայ մէջ Աղէրլանդիոյ խառն գատ ուտոր չըջու և Գահրիէնը 6 արանակութիւններ վճարած են :

—Ռուսմանական կառավարութեան զեկուցման համաձայն, Եգիպտոսէն հասնող նաւերուն վրայ դրուած քարանթիւնան 10 օրի բարձրացած է :

Վարակիչ նիւթերու ներածութիւնը, ինչպէս բամբակ, մորթ, պտուղ, բանջարեղէն և այլն, բացարձակապէս արգիւտած է :

—Քանի որ առաջ ոտականութիւնը Մէնէթ-Էլ-Պասալի մէջ տեղացիի մը դիակը գտած է, որուն համար բտուած է թէ կաթնածաղար եղած է :

Եղած տուարկութիւնը ճշդելու համար դիտող կառավարական հիւանդանոց փոխադրուած է, ուր հաստատուած է թէ անոր մարմնոյն վրայ հարուածի նշաններ կան :

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր

Բարիկ 18 Յունիս. — Տէլքասէ խորհրդարանին կը ծանուցանէ թէ՛ Բէքիւնի օտար տէրութեանց բոլոր ներկայացուցիչները վերջնապէս համաձայնած են տուգանքի խնդրոյն և անոր վճարման եղանակին վրայ : Լանտրա 18 Յունիս. — Հասարակաց խորհրդարանը ընդունած է արքունի հասոյթից վարչութիւնը :

Ս. Բէթէրսպուրկ 18 Յունիս. — Չարուհին աղջիկ մը ծնաւ :

Բարիկ 18 Յունիս. — Մարօքի դեսպանը հասած է :

Գանէ 18 Յունիս. — Մեծ տէրութեանց դեսպանները ժօրժ իշխանին զեկուցած են իրենց տէրութեանց կամբքը, որ է նոյնը պահել իրաց վիճակը :

ՏՈՐՓ . Ա . Յ . ԲԵՐԵՍՏՐԱՆ

Իր գլխիքը Շարա գլօտ-Պէյէ փոխադրած լինելով ի Տահէր, Շարա Պիրքէթ-Էլ-Բաթլը, ֆրէշներու վարժարանին դիմաց, կը ծանուցանէ իր արդոյ յաճախորդաց ոչ յետ այսու իր խնամաց պէտք ունեցողները հաճին դիմել վերոյիշեալ տեղն ուր կը գտնուի կէս օրէ առաջ ժամը 9-11 և կէս օրէ յետոյ 3-5 :

ՀԱՅՎԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ

« ԿՌԱՆ ՔԱՖԷ ՇԻՇԱ »

Էգպէթիյէ, Սրբէնիտ պատի դէմ, Տիար Գառնիկ Սիրունեանի սեփականութիւնը եղող սոյն հաստատութիւնը որ Գահրիէի ամենէն զեկատեսիլ եւ ամենէն օգտուուն դիրքը կը գրաւէ, ոչ միայն միջազգային այլ նոյն իսկ հայկական ժամադրաւայր մը հանդիսացած է :

Ապասարկութեան մասին ցոյց տրուած փոյթըն, բովելեաց մաքրութեան համար տարուած խնամքն ու գիներու չափաւորութիւնը ուրիշ ո՛չ մէկ տեղ կարելի է տեսնել : Հոն՝ ամեն ճաշակ իր գոհացումը կրնայ գտնել :

Օտար լեզուաւ լրագրաց հետ կը գտնուին հայերէն ամեն թերթեր :

ԿՌԱՆ ՔԱՖԷ ՇԻՇԱ հասցեով եկած նամակներն եւ աւանդներն անմիջապէս կը յանձնուին իրենց տէրերուն :

Վերջապէս միայն մէկ անգամ այցելողը կ'ընտրէ սոյն Սրճարանը ընկ իր ամենօրեայ յաճախաւայրը :

ԿՌԱՆ ՔԱՖԷ ՇԻՇԱ

Էգպէթիյէ, Սրբէնիտ պատի դէմ

ԳՐԱՇԱՐԻ ՊԵՏԲԸ ԿԱՅ

Ուր եւ մեր գործ փնտռող եւ չկայ ըսողները :

Երկու վարժ գրաչարի պէտքը կայ . մէկը « Արշալոյս » ի , եւ միւսը Հրատարակչական Ընկերութեան » համար . ամսական 80-120 ֆր . գրեմել « Արշալոյս » ի Խմբագրատունը :

Ուսանող գրաչարներ ալ կ'ընդունուին :

ԱԶԴ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Տպարանէն ըյս տեսած է ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ գիրքը որը տարիներէ ի վեր սպասած էր :

Այս ութ ու կէս երկսունակ մեծագիր Ֆորմայով գիրքը Գահիրէի Հայոց Հրատարակչական Ընկերութեան երախայրիքն է : Գինն է ԵՐԵՎ ՅՐԱՆՔ

ԳՈՒՌՏՈՆ ԼՈՒՍՒՆԵԱՆ

Ն Ո Ր Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Բ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Կ

Ս Բ Ա Ն Ս Ա Հ Ա Յ

Փ Ա Ր Ի Չ 1901

Սոյն ընդարձակ Բառգիրքը, որուն Առաջին Հատարը 1061 մեծագիր երեաներէ բաղկացած է բազմաթիւ պատկերներով զարդարուած հրատարակ ելած է և կը պարունակէ A-H գիրերը, կը վաճառուի ի Գահիրէ . գրեմել ի Պէյն-էլ-Սուրէն Հայոց Եկեղեցին ,

ՕՐ . ԲՐԻՍՏԻՆԷ ԳԱԶԱԶԵԱՆԻ

ՍՐԱՌ ԼԱՅՓ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագին . — Ապահովագրի հնութեան համաձայն շահու առաւելութիւն . — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վրեժարմանց յապաղումի պահուն . — Զտիտող պարագաներու մէջ ան ինչպիսի հաշուեյարգարութիւն . — Շահու բաժանում ամեն Հինի ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս . ԼԻՏՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտոսի

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers representing population statistics for various regions.

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers representing population statistics for various regions.

Տպագրութիւն ԺՈՂՈՎՈՂԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ԻՐԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պաշարի փողոց . Խաղնետարի սեփականութիւն , Պրիւթիլ Օթէլի ճեշք պիմաց , Գաֆէ Տը Լա Պուրսի կից :

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ Աշխարհի ամենէն լաւագոյն կարէ մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են ևւ ասոնցմէ մինչև ցաւոյ 17,000,000 ծախուած է :


400 է աւելի վկայականներով եւ մեշայններով վարձատրուած , երաշխատրեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական առուեսահանդիսին մէջ ստացած է . ՀԱԳՐԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՐԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՅԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշագործիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ ի յասկանշիմ :



Չրի դասեր և նորագուծութիւններ , ՍԻՆԿԷՐ մեքենայ յից համար , յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւն ինչմեքենայից եւ նորագուծութիւն ամեն կարգի Մեքենայից

ԴԻՆ ԶԱՓԱՒՈՐ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

ԿՕՇԿԱԿԱՐ

Գ . ԵՒ Ց . ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂԱՐԲԻ Պագար-Մուրուր թիւ 39

Կ'ուղէ՛ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած , ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող , ոտքերը կոշտերու ցաւերէն ազատ պահող և գրեմեղկուն կօշիկներ :

Դիմեցէ՛ք ի Պագար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիբան եղբարց , որոնց գործածած ապրանքներու տուրուութիւնն և ձեւերու մասին ունեցած հոգածութիւնը ամեն տարակոյսէ վեր է :

Պէշիբան եղբարք իրենց յաճախորդաց ըրած յանձնարարութիւնները փութով և մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ գրեմել իրենց . ապահովագէտ մնայուն յաճախորդ պիտի լինիք :

ԳԱՐՈՒՍԻ ԸՆՏԻՐ ԱՇՈՒՆ

Ունեւին՝ք մինչև ցարդ հայ մը որ գիտնար մտածել թէ՛ անուխն ալ մեծաքանակ սպառում կ'ունենայ եւ կ'ընայ կարեւոր շահ արտադրել : Առեւտուրի այդ ասպարէզն ալ օտարներուն թողուած էր :

Տիար Յակոբ Վարդանեան ( Մանուսեանի քեռորդի ) այժմ ամենաբնախի անուխի վաճառականութեամբ կ'ըրադի եւ մրցում բացած է օտարներուն դէմ :

Դիմեցէ՛ք իր միջերանոցը Սուգ-Սուտար թիւ 17 եւ 18 :

Անխարդախ կշիռ եւ չափաւոր գին :

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՅԵԼԷԿԵԱՆԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Գին 10 Դահեկան ողջ .